

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՄՍ 315 (վերանայված 2019թ.) ԷԱԿԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2019թ. դեկտեմբերին Աուդիտի և Հավաստումների Միջազգային Ստանդարտների Խորհուրդը հրապարակեց վերանայված ԱՄՍ 315-ը, որը ամփոփված է ստորև աղյուսակում.

<p>Ներքին հսկողության համակարգ</p>	<p>ԱՄՍ 315 (վերանայված 2019թ.-ին) այլևս չի պահանջում, որպեսզի աուդիտորը որոշի՝ արդյոք հսկողության ստորև ներկայացված բաղկացուցիչներն իրագործվում են.</p> <ul style="list-style-type: none"> • Հսկողության միջավայր • Կազմակերպության ռիսկի գնահատման գործընթաց • Հսկողության տարրերի մոնիթորինգ • Տեղեկատվական համակարգ՝ ներառյալ առնչվող բիզնես գործընթացները, որոնք կապված են ֆինանսական հաշվետվականության և հաղորդակցության հետ <p>Ի լրումն, ԱՄՍ 315-ը (վերանայված 2019թ.-ին) պահանջում է, որպեսզի աուդիտորը գնահատի այս բաղկացուցիչներից յուրաքանչյուրի նախագծման արդյունավետությունը:</p>
<p>Տեղեկատվական տեխնոլոգիայի միջավայր (SS)</p>	<p>ԱՄՍ 315-ը (վերանայված 2019թ.-ին) հատուկ պահանջներ է ներկայացնում SS-ի հետ կապված: Տեղեկատվական համակարգի և հաղորդակցման բաղկացուցիչը գնահատելիս աուդիտորը պետք է ձեռք բերի պատկերացումներ, թե ինչպես է տեղեկատվությունը փոխանցվում տեղեկատվական համակարգում, ինչպես նաև հաշվապահական հաշվառման գրանցումների մասին, գործընթացների մասին, որոնք անհրաժեշտ են ֆինանսական հաշվետվությունները և բացահայտումները պատրաստելու համար, և SS միջավայրի մասին:</p> <p>Աուդիտորը պետք է ձեռք բերի պատկերացումներ բոլոր նշանակալի գործառնությունների դասերի, հաշիվների մնացորդների և բացահայտումների հետ կապված SS միջավայրի վերաբերյալ:</p>
<p>Հսկողությունը՝ հաշվապահական մատյաններում գրանցումների նկատմամբ</p>	<p>Աուդիտորը բոլոր առաքելությունների համար պետք է բացահայտի հսկողության տարրերը, որոնք վերաբերում են հաշվապահական մատյաններում գրանցումներին, ինչը ներառում է դրանց նախագծումն ու իրագործումը:</p> <p>Ի լրումն, աուդիտորը պետք է պատկերացումներ ձեռք բերի հաշվապահական մատյաններում գրանցումների հետ կապված SS միջավայրի վերաբերյալ:</p>
<p>Փոքր կազմակերպությունների նկատմամբ կիրառումը</p>	<p>ԱՄՍ 315-ը (վերանայված 2019թ.-ին) դարձել է ավելի ճկուն՝ փոքր կազմակերպությունների նկատմամբ կիրառելիության տեսանկյունից:</p>

Նշանակալի ռիսկ	<p>Նշանակալի ռիսկը գնահատելիս արդեն աուդիտորը պետք է հաշվի առնի էական խեղաթյուրման հավանականությունը, ինչպես նաև հնարավոր ռիսկը մեծությունը:</p> <p>Աուդիտորը պետք է համարի, որ բոլոր նշանակալի ռիսկերը գոյություն ունեն ֆինանսական հաշվետվությունների հավաստման մակարդակում: Բացառություն է կազմում միայն խարդախության հետ կապված նշանակալի ռիսկը, որը գոյություն ունի թե ֆինանսական հաշվետվությունների և թե ֆինանսական հաշվետվությունների հավաստման մակարդակում:</p>
Բնորոշ ռիսկ	<p>ԱՄՍ 315-ի (վերանայված 2019թ.-ին) համաձայն, բնորոշ ռիսկը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում բնորոշ ռիսկի հետևյալ գործոնները.</p> <ul style="list-style-type: none"> • Բարդությունը, օրինակ՝ ֆինանսական հաշվետվողականության կիրառելի հիմունքների մեկնաբանման հետ կապված • Սուբյեկտիվությունը, օրինակ՝ հաշվապահական գնահատումների հետ կապված • Փոփոխությունը, օրինակ՝ իրադարձությունների և հանգամանքների փոփոխության հետ կապված • Անորոշությունը, օրինակ՝ անընդհատ գործելու կարողության հետ կապված • Խարդախությունը:
Վերահսկողության ռիսկ	<p>ԱՄՍ 315-ը (վերանայված 2019թ.-ին) նոր պահանջ է ավելացրել, համաձայն որի հսկողության տարրերի նախագծման արդյունավետության մեջ համոզվելը բավարար չէ, որպեսզի աուդիտորը փոքրացնի ընտրանքի չափը՝ համապարփակ ընթացակարգեր իրականացնելիս:</p> <p>Այնուամենայնիվ, հսկողության տարրերի նախագծման արդյունավետությունը պետք է գնահատվի՝ դրանց գործառնական արդյունավետությունը հասկանալուց առաջ:</p>
Պրոֆեսիոնալ կասկածամտություն	<p>ԱՄՍ 315-ը (վերանայված 2019թ.-ին) խրախուսում է, որպեսզի աուդիտորներն ավելի կասկածամտորեն մոտենան հարցերին, ինչպես նաև դրանք ավելի մանրամասն փաստաթղթավորեն:</p>
Վերանայում	<p>ԱՄՍ 315-ը (վերանայված 2019թ.-ին) պահանջում է, որպեսզի աուդիտորը մեկ անգամ ևս վերանայի իր գնահատումները կապված այն հարցի հետ, թե արդյոք էական գործառնությունների դասերը, հաշիվների մնացորդները և բացահայտումները չեն համարվում նշանակալի գործառնությունների դասեր, հաշիվների մնացորդներ և բացահայտումներ, որոնք կապված են էական խեղաթյուրման ռիսկի հետ:</p>